

բում, զի կատարեսցուք. ոսկի արծաթ եւ այլ ինչ, զոր կամի. իսկ վարդապետն եւ ոչ միոյ իրաց հաճեալ էր, քանզի ասէր. ոչ ունիմ ես կարիս մարմնաւոր իրաց, զի զպէտս իմ Տէրն իմ հոգայ օր ըստ օրէ»:

«Եւ յետ աւուրց ասաց Խօջայ Նաղարն առ արքայ. լուսարարութիւն էջմիածնի եթէ չընորհես սմա. յոյժ բարւոք ատենս, քանզի ինքն եւ զայս խնդրէ: Եւ խնամօքն Աստուծոյ թաղաւորն շնորհեալ էր զայդ խնդիրն»։28)

Ժամանակուան կաթողիկոսական պայքարին մէջ ալ խառնուած էր Խօջայ Նաղար, որ Դաւրիթը կը պաշտպանէր Սահակի դէմ:

Այդ միջոցին 1627-ին Շահ Ապպաս Մեծ կը դռնուի Պաղատա, ուր կը զիմէ նաեւ Սահակ՝ դանդաղեցնելու համար Շահին, որ իր ընտրութիւնը իրր հայոց կաթողիկոս՝ չէ ընդունուած:

Դաւրիթեցի կը պատմէ, թէ Շահը Սահակին կը հարցնէ. «^ով է չընդունողը: Եւ Սահակն վասն երկիւղէ յանուանէ ոչ յիշեաց՝ այլ միայն ասաց թէ՝ յայտնի է թաղաւորին: Եւ Շահն իմացաւ, որ Խօջայ Նաղարն է, վասն որոյ ասաց՝ զիտեմ զի քօն է, եւ քօն անունն Շահն Խօջայ Նաղարին ասէր:»29):

28) Անդ՝ էջ 233-234: Դաւրիթեցի, այս դէպքը առնելով Դուկաս Գառնեցիի 1631-ի յիշատակարանէն (այժմ էջմիածնի Պետական թանգարանի ձեռագիր թիւ 2372), կը պատմէ. «Ի նմին աւուրս անդ էր մեծ եւ փառաւոր իշխանն Զուղայեցի Խօջայ Նաղարն՝ որ յոյժ բարեկամ է Մովսէսի, եւ յարդոյ առաջի Շահաբաս թաղաւորին, որոյ ձեռամբն Մովսէս վարդապետն մատոյց զսպիտակ մօմն եւ զուսուցեալ ծառայսն՝ առաջի թաղաւորին, որոց ի տեսանելն յոյժ զուարճացաւ արքայ՝ եւ ի ձեռս առեալ զբօսնոյր ի նոսա, եւ բազմաւ յուսադրական բանիւ արծակեաց առ ժամուն զվարդապետն»:

29) Անդ՝ էջ 232:

«Յաւուրսն այնոսիկ եկեալ եհաս տօն Ծննդեան եւ Յայտնութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, եւ որպէս սովորութիւն էր Մովսէսի հանապաղ մեծաւ հանդիսիւ կատա-

Առաջին անգամ ըլլալով՝ կ'իմանանք, թէ Շահը Խօջայ Նաղարին «քօն» (քօն, կոյր) մակդիրով կը կոչէր: Դաւրիթեցի չի յիշեր, որ Խօջայ Նաղար կոյր եղած ըլլայ: Այս կուրութիւնը, սակայն, միայն միականիութեամբ կարելի է ընդունիլ, եթէ երբեք ընդունելի է: Օտար ուղեղիրներ ալ չեն յիշեր Խօջայ Նաղարի կուրութիւնը կամ միականի ըլլալը: Եթէ «քօն» քմահաճ մակդիր մը չէր, Շահին Խօջայ Նաղարի արուած, այն ատեն պէտք է ընդունիլ, որ մեծանունն Հայ վաճառականապետը աչքի անկանոնութենէ, տկարութենէ կամ նուազատեսութենէ կը տառապէր:

* * *

1627-ին գրուած Սողոմոնի Գրքի մը (Նոր Զուգայու վանքին թիւ 96, թղթեայ նօտրդիր, երկսիւն) յիշատակարանին մէջ կը կարդանք: Գրչէն «Փառք... Արդ ես թափուրս ի բարեաց... Յակոր երեցս զրեցի սուրբ մեկնիչս Դաւթայ. ի թուին Հայոց ՌՀԶ (1627) ի քաղաքն Ասպահան. ի զօղն Զուգայ ի դուռն Սուրբ

րել զտէրունական տօնսն, եւ ես առաւել զտօնս բաղում պատրաստութեամբ եւ յարմարադոյն կարգաւորութեամբ. քանզի ինքն թաղաւորն եւս հանդերձեալ էր ի տեսութիւն եւ ի դրօսանս տօնին գալ, որ եւ եկն. եւ վարդապետն Մովսէս թափեաց զերկու սպիտակ մօմս մարդաւի եւ ի ճրագաւուրցի զիշերն ի լուսանալ տօնին լուցեալ յերկորեայ յանուն սրբոյն Աստուածածնին եւ ինքն յոտին կացեալ հսկելով յառաւօտն ջերմագոյն սիրով եւ հաստատուն հաւատով. յորդարուի արտասուօք աղօթելով առ Տէր, բարեխօս արկեալ առ միածին Որդին զտիրամայր սուրբ Աստուածածնին, զի շնորհալի ցուցցէ զտօնախմբութիւնն այլահաւատ թաղաւորին, եւ արկցէ զգութ եւ զողորմ ի սիրտ նորա ի վերայ քրիստոնեայ ազգին: Որ եւ ողորմութեամբն Աստուծոյ եղեւ ըստ խնդրոյ վարդապետին, զի յաւուր տօնին մինչ նստէր արքայ ի դրօսանս տօնին՝ եւ վարդապետն զդեստաւորեալ իւրովք պաշտօնէիւք կատարէր զկարգն Զօրհնեաց, յոյժ հաճեալ եւ հաւանեալ էր արքայ ընդ տօնախմբութիւնն. եւ զթացեալ ի վերայ յոյժ հաճեալ եւ հա-